

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Գեղամաքերի 8-ին Թիֆլիսում վախճանուել է 84 տարեկան հառակում Թիֆլիսեցի եգոր Զոհրաբեան, Հանգուցեալը չունէր ուղղակի ժառանգ. նա թողել է մի կտակ, որով իր ամբողջ կարողութիւնը մօտ 170,000 ռուբլի, կտակել է բարեգործական նպատակներին, մի մասն իր առևտրական տան ծառայողներին և աշխատակներին և մի մասն իր ազգականներին:

Բարեգործական նպատակով նա թողել է 85,000 ռուբլի, որից 70,000 ռ. կտակել է Թաւրիզում թեմական ազգային դպրոց հիմնելու, 5,000 ռուբլի՝ Կովկասի Հ. Բ. ընկերութեան, 5000 ռուբլի՝ Հայուհեաց Բ. ընկ. 2000 ռուբլի՝ Քարափի թաղի ո. Գէորգ եկեղեցուն, 500 ռ. քահանաների սնուելին, 1000 ռ. Կոյրերի կնամատար Ընկերութեան, 1000 ռ. Ախայցխայի հիւանդանոցին և 500 ռ. Հանգամէջ գիւղի եկեղեցուն:

Գեղամաքերի 10-ին, երեկոյեան, բանալով կտակը, վերահասու լինելով նրա բովանդակութեանը՝ կտակահատարները որոշել են խնդրել հոգևոր իշխանութիւնից թոյլ տալու թաղելու հանգուցեալին Վանքի եկեղեցու բակում, իբրև մի ազգային բարերարի:

Կաթուղիկոսական տեղապահ Սուրէնեան որբազանը, համաձայն Թիֆլիսի առաջնորդի միջնորդութեան, յարգել է կտակահատարների խնդիրը և թոյլ է տուել եգոր Զոհրաբեանին թաղել Վանքի եկեղեցու բակում:

ՍՈՍԻՆԱԼԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Ներկայ 1908 նահանջ տարում տեղի ունեցած դժբաղդութիւններից ամենածր բաժին ընկաւ Իտալիային. Գեղամաքերի 15-ին Իտալիայի հարաւային մասում և Սիցիլիա կղզում տեղի է ունեցել սովալի երկրաշարժ, որ աւերել է մի քանի քաղաքները ու նաւահանգիստներ բաղբաթիւ մարդկային զոհեր պատճառելով. առաջ ենք բերում մի քանի հեռագիրներ:

Պալէրմօ, 17 դեկտեմբերի

Հաղորդում են, որ Մէսսինայի քաղաքային խորհրդից կենդանի մնացին միայն նախկին քաղաքագլուխը և մի ձայնաւոր: 160,000 բնակիչների մօտ երկու երրորդ մասը զոհ գնաց աղետին: Երէկ երեկոյեան Պալէրմօյում և Մէսսինայում կըրկին զգացուեց երկրաշարժ: Մէսսինայում «Բելլիգէր» հիւրանոցի հրդեհը դեռ չարունակոււմ է: Մէսսինայի ջորքերի մասին

ստացուած տեղեկութիւնները չարիադանց ցաւալի են: Ս. Հեղինէի զօրանոցը, ուր գտնուում էին երեք զնդեր, կործանուել է: Առգատուել են միայն 20 զինուոր: Հետեակ զնդից կենդանի են մնացել միայն 10 զինուոր, մաքսատան պահակախմբի 400 զինուորից — միայն 15-ը: («Հ. Գ.»)

Պալերմօ, նոյն օրը

Երէկ երեկոյեան ստացուեց առաջին անգամ Մէսսինայի քաղաքապետի հեռագիրը: Նրա ասելով, աղետը մարդկային մտքից լիք մի սոսկալի բան էր: Մէսսինան բոլորովին կործանուել է, զոհերի թիւը հաշուում են տասնեակ հազարներ: Անկարելի է նկատել ազգաբնակչութեան կրած սարսափը: Օգնութիւնը քիչ է. անհրաժեշտ են արտակարգ միջոցներ. մասնաւորապէս մեծ կարիք կայ միթերընների: Հրդեհը դեռ շարունակուում է:

Այստեղ զգացւում է նոր ստորերկրեայ հարուած: Ազգաբնակչութիւնը սարսափահար է: Նեղուցը անցած ճանապարհորդները սոսկալի տեսարաններ են պատմում: աղետը անհնար է նկարագրել իր իսկական կերպարանքով:

Սանջիօվանին, Բէջիօն, Շիլլան, Կանիտաէլօն և ուրիշ շատ և շատ նման տեղերը աւերակներն կոյտի են փոխուել: («Հ. Գ.»)

Կատանիա, 17 դեկտեմբերի

Մէսսինայի կենդանի մնացած բնակիչներից մէկը, որը եկել է այստեղ, հաղորդում է, որ քաղաքը աւերակների մի ահագին կոյտի է փոխարկուած: Համարեա բոլոր բնակիչները սպանվել են, մի քանի հազար հոգի միայն ազատուել են մահից: Կենդանի մնացածները շրջապատ են ամենաանհրաժեշտ առարկաներից: Պակտուում են հրդեհաշէջ մեքենաներ՝ աւերակները պատող կրակը հանգցնելու համար: Մէսսինան կարծես թէ ջրնջուած է երկրի երեսից: Կայսրանը քանդուեց, երկաթուղային բոլոր վագոնները ջարդուած են, երկաթուղային համարեա բոլոր ծառայողները սպանուած են: Փողոցները ներկայացնում են ահագին ճեղքուածներ աւերակների ընդարձակ դաշտի վրայ: Համալսարանը, պոստը, հեռագրատունը և հասարակական բոլոր շինութիւնները անհետացան: Քաղային խողովակները բոլորովին ոչնչացած են: Քաղաքը մի քանի ժամ առանց օգնութեան էր մնում, սրովհետեւ աւերակները իրանց տակը թաղեցին կառավարչական հիմնարկութիւնները, բերդապահ զօրքը, բժիշկիներին և դեղագործներին: («Գ. Հ.»)

Հռօմ, 17 դեկտեմբերի

Ստեֆանիի գործակալութեանը հաղորդում են, որ սկսել են օգնութիւն հառցնել վնասուածներին Մէսսինայում: Ռուս

նաւաստիները, զարմանքի արժանի համարձակութեամբ և արհամարելով վտանգը, աշխատում են՝ հանելով վիրավորներին աւերակներէօց: «Տրիրունային» հաղորդում են Մօնտէլուօնօյից, որ ծովային ալիքը, որ կաղմուել է ծովի տատանման պատճառով երկրաշարժից, հասաւ Բէջիօ մինչև տասը ոտնաչափ բարձրութեան ծովի մակերևոյթից: Ծովի մօտ գտնուող տները կանգնած էին ջրի մէջ մինչև առաջին յարկը. ալիքները տարել են շատ տներ: Գազի պայթումները ահադին վնաս պատճառեցին: Դեռ ևս չէ որոշուած սպանուածների թիւը: Կարծում են որ սպանուածների թիւը անցնում է 1800 հոգուց: Երկրաշարժը սկսուելու վարկեանին բազմաթիւ ճանապարհորդներ կայարանում թաղուեցին կայարանի պատերի տակ. երկաթ թուղային ճանապարհը ոչնչացած է 18 կիլոմետր տարածութեամբ: Նոյն վիճակին ենթարկուեց երկաթուղ. գիծը Բէջիօյի ճանապարհին: Հետևակ ղորքի մի բառալիօն է ուղարկուած Գէրաչէ և շրջակայ տեղերը: «Սաֆֆօ» ահանանաւը, որ ճանապարհ է ընկել Մէսսինա հացի բեռով, վատ եղանակի պատճառով ստիպուած էր ապաստանել Սանտա-Վեներէ նաւահանգստում: Երկաթուղային ծառայողները թողեցին ծառայութիւնը և որոնում են տների աւերակների տակ թաղված իրանց ընտանիքներին: («Հ. Գ.»)

Հռոմ, նոյն օրը

Բէջիօյից ստացուած յետագայ տեղեկութիւններից պարզւում է, որ վրատակների տակ մնացել են մի քանի հարիւր զինւորներ: Սպանուած և վիրաւորուած են շատ ոստիկաններ: Պալմի քաղաքում մինչև դեկտ. 16-ի երեկոն հանել են 300 գիակ: Վախենաւ են, որ դեռ մօտ 300 հոգի էլ վրատակների տակն են մնացել:

Բանիարա քաղաքի զոհերի թիւը հասնում է 1000-ի: Համարեա ընդոր տները քանդուած են:

Գերաչէմարինօ եկած Բէջիօյի քաղաքապետը հաղորդեց, որ ամբողջ քաղաքը քարուքանդ եղաւ, սպանուեցին հազարից աւելի մարդ, ընդոր հասարակական հիմնարկութիւնները փրկուեցին: Գաւառի շատ տեղերում սոսկալի աւերածութիւն և ամայութիւն է տիրում: («Հ. Գ.»)

Պալէրմօ, 17 դեկտեմբերի

Ուսէյկա կղզուց տեղեկութիւններ են ստացուած, ստորերկրեայ գորեղ ցնցումներ են եղել երէկ ցերեկով երեկոյեան 7 ժամին: Ազդարնակութիւնը գիշերը անցկացրեց բացօդեայ: («Հ. Գ.»)

Տէրաշէնալինից եկած մի օֆիցէր յայտնում է, որ Ռէջիօն քարուքանդ եղաւ, սպանութիւնների թիւը չափազանց շատ է:

Մէսօնիայի առաջ կանգնած անգլիական և ռուսական նաւերը իրանց նաւաստիներին ափ իջեցրին վնասուածներին օգնելու համար: Նաւերը փոխարինում են հիւանդանոցներին:

Մէլիսօ քաղաքի պետը և Լայէրօ կայսրանի կառավարէիը հեռագրով Կատանցերօ քաղաքապետից խնդրեցին մարդիկ սղարակել սպանուածներին թաղելու համար: (Հ. Գ.)

ՀԱՄԱՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ինչպէս յայտնի է հեռագիրներից դեռ 11-ին Պետերբուրգում բացուեց համառուսական կանանց առաջին համագումարը Սէքսանդրեան դահլիճում (քաղաքային Գուման):

Ուշագրաւ պատկեր է ներկայացնում այդ համագումարը: Դահլիճը ծայրէի ծայր լցուած է կանանց ներկայացուցչութեամբ. տղամարդիկ չդափազանց քիչ կան: Հանդիսականներին ներս չեն թողնում, այնպէս որ շատերը ստիպուած են մնալ դրսում, արտակարգ խստութիւններ են ձեռք առնուած, ասում է СЛОВО» լրագրի աշխատակից Լիւբօշը իր «տպաւորութիւնների» մէջ: Փողոցից սկսած, շինութեան սանդուղքների ու ամեն մի դռան առջև կարգ-կարգ կանգնած երիտասարդները, պատանիներն ու աղջիկները գիմում են պահանջով՝

— Զեր տոմոսկը:

Վերջապէս ներս էք մտնում հանդիսաւոր կերպով լուսաւորուած դումայի դահլիճը և միանգամից ընկնում էք կանանց թագաւորութեան մէջ:

Սաւաննապէս ուժեղ տպաւորութիւն է թողնում կանանց աղմկայայտ ծովը կուտուած վերեւում և ճեմի վրա:

Սկսում են անհամբեր ծափեր: Բայց նիստը բանալ դեռ ևս չէ կարելի. սպասում են Ա. Ն. Շաքանովային:

Վերջապէս համագումարի պրեզիդիւմը լիովին ներկայ է: Ժամը 8-ին, նիստը բանալով Շաքանովան ողջունում է համագումարը և արտայայտում իր ուրախութիւնը «կանանց առաջին համագումարի բացման» առիթով:

Համագումարի նախագահի ընտրութիւնից յետոյ, ամբիօն է բարձրանում Ա. Պ. Ֆիլօսօֆովան:

Նրա ճառը բարձրացնում է թողովի առանց այն էլ բարձր մթնոլորտը:

«Ինձ, որ ապրել եմ 8 տասնեակ տարիներ, — ասում է